



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 հունվարի 2017 թվականի N 23 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ
2017 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77.1 և 77.2 հոդվածները, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.37-րդ, 1.38-րդ կետերը և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2017 թվականի հունվարի 12-ի N 5-Ա հրամանը՝

որոշում եմ

1. Հաստատել 2017 թվականի 1-ին եռամսյակում Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ծաղկավան /Տավուշի շրջ./, Պառավաքար և Իծաքար համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողություն իրականացվելիք հսկողության բնագավառը, ժամանակահատվածը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը համաձայն հավելվածի:
2. Հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2014 թվականի փետրվարի 10-ի N 01/15/577-14 հանձնարարականով ներկայացված՝ համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմնի և իրավական հսկողության

բարձրագույն մարմնի համատեղ հրամաններով հաստատված Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող հսկողության հարցաշարով:

3. Անհրաժեշտության դեպքում հսկողության աշխատանքային խմբում ներգրավել մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:
4. Մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց (համաձայնությամբ):
5. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ յուրաքանչյուր համայնքում հսկողություն իրականացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իրավական հսկողության բարձրագույն մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:
6. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա առաջին տասնօրյակում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն ներկայացնել տվյալ եռամսյակում իրականացված հսկողության արդյունքում կազմված արձանագրությունները:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



Հ. ԱՐՈՎՅԱՆ

24 հունվարի 2017թ.

ք. Իջևան

Հավելված

ՀՀ Տավուշի մարզպետի

2017 թ. թիվ 22Ա որոշման

**2017 թվականին Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ծաղկական /Տավուշի շրջ./,
Պառավաքար և Իծաքար համայնքներում իրականացվելիք իրավանցվելիք և մասնագիտական
հսկողության բնագավառը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը**

h/h	Համայնքի անվանում	Իրականացվելիք հսկողության ժամանակա հատվածը	Իրականացվելիք հսկողության բնագավառ	Հսկողություն իրականացնող կաշտոնատար անձիք	
				Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ)	Անուն, ազգանուն
1.	Ծաղկական /Տավուշի շրջ./	1-ին եռամսյակ	բնապահպանություն, առևտուր, արտակարգ իրավիճակներ, ՏԻՄ պարտադիր լիազորություններ, ֆինանսներ	Խմբի ղեկավար, Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ	Ֆելիքս Ակիբյան Սամվել Գևորգյան Գուրգեն Հարությունյան Գագիկ Մատինյան Աշոտ Մարրանյան Ժորա Խաչատրյան

4.	Պառավար	բնապահպանություն, արտակարգ իրավիճակներ, ՏԻՄ պարտադիր լիազորություններ, առևտուր, ֆինանսներ	<p>հաբի ղեկավար, համբի անդամ համբի անդամ համբի անդամ համբի անդամ համբի անդամ</p>	Ֆելիքս Ափինյան Գագիկ Մատինյան Սամվել Գևորգյան Աշոտ Մարդանյան Գուրգեն Հարությունյան Ժորա Խաչատրյան
3.	Իծաքար	բնապահպանություն, ՏԻՄ պարտադիր լիազորություններ, արտակարգ իրավիճակներ	<p>համբի ղեկավար, համբի անդամ համբի անդամ համբի անդամ</p>	Ֆելիքս Ափինյան, Սամվել Գևորգյան Աշոտ Մարդանյան Գագիկ Մատինյան

ԱՇ ԽԱՏԱԿԱՉՄԻ ՂԵԿԱԿԱՐ



Ս. ՂԱԿԹՅԱՆ